ՌՈԲԵՐՏ ՄԱՐԿՈՍԻ ԹՈԽՄԱԽՅԱՆ

83 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց հայագիտության երախտավոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանը: Մեծ է նրա ավանդը հատկապես արդի հայերենի փորձառական հնչյունաբանության ասպարեզում:

Վանեցի ծնողների անվանի զավակը 1966 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը և նույն տարին էլ ընդունվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան: Ասպիրանտուրան հաջողությամբ ավարտելուց հետո Ռոբերտ Թոխմախյանը աշխատանքի է անցել նույն ինստիտուտի ընդհանուր լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության խմբում, որը ղեկավարում էր պրոֆեսոր Ամալյա Խաչատրյանը:

Երիտասարդ գիտնական Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանը հայագիտության մեջ մեծ հաջողությամբ կիրառել է լեզվաբանության մեջ մշակվող նորագույն փորձառական մեթոդները: Ճշգրիտ մեթոդների արդյունքների հաշվառմամբ Ռ. Թոխմախյանը փայլուն հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական՝ հետագայում՝ դոկտորական ատենախոսությունը:

Սկսած 1966 թվականից՝ Ռ. Թոխմախյանը իր գիտական գործունեությամբ սերտորեն կապված է եղել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Անվանի հայերենագետը ավելի քան կես դար դասավանդել է Հայաստանի Հանրապետության բուհերում (Երևանի պետական համալսարանում, Վ. Բրյուսովի անվ. լեզվաբանության ինստիտուտում և այլ բուհերում):

Անցյալ դարի 90-ական թվականների կեսերից շուրջ չորս տարի Ռոբերտ Թոխմախյանը աշխատել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ճեմարանում: Ամենուրեք նա անկեղծորեն բարձր է գնահատվել և սիրվել ուսանողության և տնօրինության կողմից: Դա վկայում է այն մասին, որ անվանի հայերենագետը ոչ միայն գիտական խորությամբ և միաժամանակ մատչելիությամբ կարողացել է մատուցել լեզվաբանության հիմունքներն ու նորագույն նվաճումները, այլև հանդես բերել հոգատար և ազնվագույն մանկավարժի հատկանիշներ:

Հայագիտության մեջ Ռոբերտ Թոխմախյանը հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների, մենագրությունների: Դրանցում դիտարկվում են հայերենագիտության նորագույն նվաճումները: Անվանի հնչույթաբանը մեծ հաջողությամբ մասնակցել է բազմաթիվ միջազգային լեզվաբանական գիտաժողովների և միշտ բարձր է պահել Հր. Աճառյանի անունը կրող լեզվի ինստիտուտի պատիվը: Հայերենագետը օրինակ կարող է ծառայել երիտասարդ գիտնականներին, տիրապետելով ընդհանուր լեզվաբանության նորագույն նվաճումներին՝ նորովի դիտարկելիս արդի հայերենի հնչյունական կառուցվածքը:

Վերջին տասնամյակում պրոֆեսոր Ռոբերտ Թոխմախյանը լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի առաջատար գիտաշխատակիցներից էր: Վերստին ուզում ենք հիշեցնել, որ նա օրինակ կարող է ծառայել երիտասարդ հայերենագետներին՝ վիճակագրական մեթոդների արդյունավետ օգտագործմամբ որակական նոր մակարդակի բարձրացնելու հայերենագիտությունը: Այդ է վկայում Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանի «Հայերենի հնչաշղթան» մենագրությունը:

«Էդիթ պրինտ» հրատարակությամբ 2011 թ. Ֆ. Խլղաթյանի հեղինակակցությամբ լույս է տեսել «Շարահյուսություն (կապակցաբանություն): Վարժություններ և գիտական գործնական աշխատանքներ» գիրքը:

Տողերիս հեղինակի և Ռ. Թոխմախյանի հեղինակակցությամբ ժամանակին լույս է տեսել «Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում» աշխատանքը՝ ՀՀ Սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից:

Ռոբերտ Թոխմախյանը, կանոնական մակարդակին զուգահեռ, քննության է ենթարկել արդի հայերենի արևելահայ և արևմտահայ գրական լեզուների խոսակցական ոլորտում դրսևորվող ոլորտային առանձնահատկությունները:

Անկեղծ ցավ ապրելով մեր գործընկերոջ մահվան առիթով՝ ուզում ենք նշել, որ ավելի քան կես դար մենք միասին աշխատել ենք նույն բաժնում, մշակել գիտական նորագույն բնագավառներ, հանդես եկել հեռուստատեսությամբ և այլն:

Հայտնի ասույթ է. «Մարդը գնում է, գործը՝ մնում»: Ռոբերտ Թոխմախյանը մնայուն լեզվաբանական աշխատանքների հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի երիտասարդ սերունդը շատ բան ունի սովորելու Ռ. Թոխմախյանի օրինակից:

Պետք է անկեղծորեն հուսալ, որ հայոց լեզվի և մեր կենդանի խոսքի ասպարեզում եռանդուն ջատագովի համբավ ձեռք բերած Ռ. Թոխմախյանի գործը կշարունակվի և ավելի կընդարձակվի նոր սերնդի լեզվաբանների կողմից:

Սրտի խորունկ ցավով նշելով կորուստը մեր անկրկնելի ընկերոջ՝ Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանի՝ ասում ենք.

– Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի...

ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍՅԱՆ